

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

----- 2019 թ. № ----- -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի № 160-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի «Համահայկական ամառային յոթերորդ խաղերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտե ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» № 160-Ա որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «ՀՀ կրթության և գիտության նախարար» բառերը փոխարինել «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար» բառերով,

2) «ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար» բառերը փոխարինել «ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար» բառերով,

3) «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար» բառերը փոխարինել «ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար» բառերով,

4) «Գ. Ղազարյան – ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար» բառերը հանել,

5) «Բ. Տեր-Գրիգորյան – ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ» բառերը փոխարինել «Զ. Սինանյան – Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար» բառերով:

6) հավելվածը լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Լ. Մինասյան – Պետական արարողակարգի ծառայության պետ

Գ. Ավետիսյան – Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N° 160-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N° 160-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է կատարել փոփոխություններ և լրացումներ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի փետրվարի 28-ի «Համահայկական ամառային յոթերորդ խաղերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտե ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N° 160-Ա որոշման մեջ՝ պայմանավորված «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

2019 թվականի օգոստոսի 5-ից 17-ը անցկացվելիք Համահայկական ամառային յոթերորդ խաղերի կազմկոմիտեի կազմում Նախագծով կատարվում են լրացումներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի ապրիլի 23-ի N° 04/03.13/19517-2019 հանձնարարականի:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Համահայկական ամառային խաղերի անցկացումը նպաստում է հայրենիք-սփյուռք կապերի հաստատմանը, զարգացնում զբոսաշրջությունը Հայաստանում, բարեկամական կապեր հաստատում սփյուռքի և Հայաստանի երիտասարդության միջև, նպաստում երիտասարդության ֆիզիկական դաստիարակությանը և հայենասիրության գաղափարի արմատավորմանը:

Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծով Համահայկական ամառային յոթերորդ խաղերի կազմկոմիտեի կազմը համալրվում է նոր անդամներով, նախարարությունների անվանումները համապատասխանացվում են «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N° 160-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

Ակնկալվող արդյունքը

Համահայկական ամառային յոթերորդ խաղերի կազմկոմիտեի կազմը համալրվում է նոր անդամներով, և նախարարությունների անվանումները համապատասխանացվում են «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N° 160-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐՄԱՏԻՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N° 160-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ նորմատիվ այլ իրավական ակտերի ընդունման կամ գործող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N° 160-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N° 160-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N° 160-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| <i>h/h</i> | <i>Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, համարը</i> | <i>Առաջարկության բովանդակությունը</i> | <i>Եզրակացություն</i> | <i>Կատարված փոփոխությունը</i> |
|------------|--|--|---------------------------|---------------------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | ՀՀ ֆինանսների նախարարություն 10.05.2019 թ. N° 01/11-2/7657-2019 գրություն | Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն ուսումնասիրել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 160-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և հայտնում է, որ առաջարկություններ և դիտողություններ չունի: | Ընդունվել է ի գիտություն: | |
| 2. | ՀՀ արդարադատության նախարարություն 09.05.2019 թ. N° 05/11394-19 գրություն | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N° 160-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի 1-ին կետում «հետևյալ շարադրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթները: | Ընդունվել է: | Կատարվել է համապատասխան փոփոխություն: |

| | | | | |
|----|--|---|--------------|---|
| 3. | ՀՀ վարչապետի աշխատակազմ 10.06.2019 թ. № 01/11.3/26798-2019 հանձնարարական | Վարչապետի հանձնարարությամբ՝ խնդրում եմ վարչապետի աշխատակազմ ներկայացնել նախագծի՝ ՀՀ կառավարության նոր կառուցածքին և կադրային փոփոխություններին համապատասխանեցված տարբերակը: | Ընդունվել է: | Կատարվել են համապատասխան փոփոխություններ: |
|----|--|---|--------------|---|